Հավելված N 1
«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/16» ծածկագրով
էլեկտրոնային աճուրդի հրավերի

# ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/16» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 3-38 չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00045967
- բանկային հաշվեհամարն է՝ 1510003864590100
- գործունեության հասցեն է՝ ք. Երևան, Ավան, Մ. Բաբաջանյան 9/5
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ romallcgnumner@gmail.com
- հեռախոսահամարն է՝ 011 99 99 69
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ POMA OOO

Սույնով «ՌՈՄԱ» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ՌՈՄԱ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ՌՈՄԱ» ՍՊԸ-ն պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ՌՈՄԱ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «ՌՈՄԱ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ՌՈՄԱ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և

հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«ՌՈՄԱ» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

«ՌՈՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռ.Խոջաբագյան ________________________

Digitally signed by KHOJABAGYAN ROMAN 1402800134
Date: 2026.06.12 12:16:50 GMT+04:00